11 *Ջաւախէտ: յամի յազգէ՝*

12 ***1167:***

Ծանոթություն.— *Քաջ միայն հիշատակել է անունը:*

Տարընթերցում.— *1. 5-րդ տողում* սա շինե(ա)ց Դրիմ *կարդացել է՝* ես շինեցի:

2. 7-րդ տողում զոր ես թեմ ու վիճ(ա)կ Դրիմ *կարդացել է՝* որ ես ութ թեմ ու վիճակ:

3. Թվականը Դրիմ *վեր է ածել հայերեն գրերի և 20 տարով հնացրել. նա թվականը կարդացել է* ՌՃԽէ:

4. 5-րդ տողում շինե(ա)ց *բառը գործ է ածվել կարգավորեց, սահմանեց, հաստատեց իմաստով: Մեզ անծանոթ է* ղայլուլին *բառը, բայց արձ. բովանդակությունից հասկացվում է, որ Բարսեղ եպիսկոպոսի մեծագույն արժանիքը Սանահնի թեմի և վիճակի հարցի կարգավորումն է եղել: Նա Շահնավազ խանի հրամանով կարողացել է Սանահնի վիճակն ու թեմը հասցնել մինչև Ջաջուռ, Չլդր և Ջավախեթ: Այդ է պատճառը, որ նրա գերեզմանի վրա գրված է թեմի սահմանները կարգավորելու մասին:*

160. Դսեղի գավթի ամ պատին հենված մեծ խաչքարի ճակատին

ԺԳ դար

Հրատարակված է՝ Հար 282, Լալ 383

Նշան[դ Ա]յ յաւգնեա Բրդի, Խորիշահի եւ գաւ[ա]կաց նոցա:

Ծանոթություն.— *Արձանագրության վերջավորությունը գրված է խաչքարի կողքին, ճակատի շարունակության վրա:*

161. Նույն գավթի կամարներից մեկի բացվածքի վրա դրված խաչքարի ճակատին

(Լուս. № 90)

1215 թ.

Հրատարակվում է առաջին անգամ

Նշանդ Ա̅յ աւգնեայ Սարգսի յաւուրն մեծի:

Ծանոթություն.— *Ժամանակը որոշել ենք խաչքարի թիկունքի արձանագրությամբ, որ նրա կանգնեցման հանգամանքներին է վերաբերում (արձ. № 155):*

162. Վանքի աղբյուրի ճակատին

Հրատարակված է՝ Հար 308, Լալ 393, Քաջ 629

1 *Յարութիւն արքեպիսկոպոս շինեաց զաղբիւրս այս յորդահոս: Ով վայելօղք այսմ ջրոյս յիշեք զսա առ որ Յ̅ս:*

2 *Սա էր տոհմէն տ̅ր Բարսեղեանց եւ սահմանէն անուի Տաւուշայ, Սանահին յառաջնորդեաց, արդեամբ իւրով զայս օրինեաց:*

3 ***Թվ. 1831:***